«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ»
ՀԻՄՆԱԴՐԱՄԻ

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԲԱԺՆԻ

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

Հավելված 1
«Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի
պետական ինստիտուտ» հիմնադրամի
Գիտական խորհրդի
2022 թվականի մայիսի 25 թիվ 117-Լ որոշման

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԲԱԺՆԻ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմադրամի (այսուհետ՝ Ինստիտուտ) Տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի (այսուհետ՝ Բաժին) հանդիսանում է Ինստիտուտի կառուցվածքային ստորաբաժանում, որն աշխատում է Բաժնի ղեկավարի անմիջական ղեկավարությամբ և հաշվետու է Ինստիտուտի ռեկտորին:
2. Բաժինն իր գործունեությունը իրականացնում է ղեկավարվելով ՀՀ օրենսդրությամբ, Ինստիտուտի կանոնադրությամբ, Ինստիտուտի կողմից ընդունված ներքին իրավական ակտերով և սույն կանոնակարգով:
3. Սույն Կանոնակարգով սահմանվում են Բաժնի նպատակը, խնդիրները, կառուցվածքը, իրավասությունները, բաժնի ղեկավարի և աշխատողների իրավունքները ու պարտականությունները և պատասխանատվության շրջանակը:
4. Բաժինը կարող է ունենալ կնիք և ձևաթուղթ:
5. Բաժինը վերակազմավորվում կամ լուծարվում է համաձայն Ինստիտուտի կանոնադրության:

2. ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆՆԵՐԻ ԲԱԺՆԻ ՆՊԱՏԱԿԸ, ԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

6. Բաժնի **նպատակն է՝** ապահովել Ինստիտուտի տեղեկատվական տեխնոլոգիաների ենթակառուցվածքների սպասարկումն ու արդիականացումը:

7. Բաժնի **խնդիրներն են՝**

1) Տեղեկատվական տեխնոլոգիաների ենթակառուցվածքների անխափան աշխատանքի կազմակերպում
2) Համակարգչային ներքին ցանցի կառավարում և սպասարկում
3) Համակարգչային տեխնիկայի և համալրող սարքերի անխափան աշխատանքի ապահովում
4) ՏՏ ոլորտի նորամուծությունների մշտադիտարկում և անհրաժեշտության դեպքում ներդրում
5) Ներդրվող համակարգերի մասով աշխատակիցների համար վերապատրաստումների կազմակերպում

8. Բաժնի գործառույթներն են՝

1) Տեղեկատվական տեխնոլոգիաների ենթակառուցվածքների և սերվերների գործունակությունը վերահսկելու միջոցառումների իրականացում
2) Համակարգիչների ծրագրային և տեխնիկական սպասարկում
3) Էլեկտրոնային փոստի շահագործման ապահովում
4) Ինստիտուտում ներդրված ծրագրային փաթեթներին առնչվող խորհրդատվության տրամադրում աշխատակիցներին՝ ըստ անհրաժեշտության
5) Համակարգչային ցանցերի մոնտաժում և ցանցային սարքերի սպասարկում
6) Ինտերնետ ցանցի հասանելիության և անխափան աշխատանքի ապահովում
7) Համակարգչային ներքին ցանցի արդիականացում և ընդլայնում
8) Տեղեկատվության կրկնօրինակման, ռեզերվային պահոցի ամբողջականության ստուգմանն ուղղված միջոցառումների իրականացում
9) Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի նորամուծությունների ըստ անհրաժեշտության ներդրում
10) Բաժնի կողմից ստեղծված պրոդուկտների սպասարկում և արդիականացում

11) Ներդրվող համակարգերի մասով աշխատակիցների վերապատրաստում ըստ անհրաժեշտության

12) Տպիչ սարքերի քարթրիջների լիցքավորում և վերանորոգում

3. ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆՆԵՐԻ ԲԱԺՆԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

9. Բաժնի կառուցվածքը սահմանվում է Ինստիտուտի հաստիքացուցակով:

10. Բաժնի ղեկավարի և աշխատողների աշխատանքային իրավունքների և պարտականությունների շրջանակը սահմանվում է ՀՀ աշխատանքային օրենսդրությամբ, սույն կանոնակարգով, Ինստիտուտի ներքին իրավական այլ ակտերով և աշխատանքային պայմանագրերով և աշխատանքի նկարագրերով:

11. Բաժնի ղեկավարումը իրականացնում է բաժնի ղեկավարը՝ համաձայն Ինստիտուտի կանոնադրության, սույն կանոնակարգի և իրավական այլ ակտերի:

12. Բաժնի ղեկավարին նշանակում և ազատում է Ինստիտուտի ռեկտորը:

13. Բաժնի ղեկավարը ենթակա և հաշվետու է Ինստիտուտի ռեկտորին:

4. ՊԱՏԱԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿԸ

14. Բաժնի ղեկավարը և աշխատողները պարտավոր են պահպանել Ինստիտուտում գործող ներքին իրավական ակտերը, սահմանված ժամկետներում, բարեխղճորեն և պատշաճ հետևողականությամբ կատարել Ինստիտուտի ռեկտորի կողմից իրենց տրված հանձնարարականները և կարգադրությունները:

15. Բաժնի ղեկավարը և աշխատողները պատասխանատու են իրենց վրա դրված գործառույթների ժամանակին և պատշաճ կատարման համար:

16. Բաժնի ղեկավարը և աշխատողները իրենց վրա դրված պաշտոնեական պարտականությունները չկատարելու համար պատասխանատվություն են կրում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

17. Բաժնի աշխատողները պարտավոր են ապահովել իրենց ծառայողական պարտականությունների կատարման ընթացքում իրենց հայտնի դարձած տեղեկատվության գաղտնիությունը: Դրանք հրապարակելու դեպքում նրանք

պատասխանատվություն են կրում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

18. Բաժնի աշխատողների գործառութային պարտականությունները սահմանվում են պաշտոնի նկարագրերով:

19. Բաժնի աշխատողները պարտավոր են ապահովել իրենց ծառայողական պարտականությունների կատարման ընթացքում հայտնի դարձած տեղեկատվության գաղտնիությունը: Դրանք հրապարակելու դեպքում նրանք պատասխանատվություն են կրում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

5. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

20. Սույն Կանոնակարգը ուժի մեջ է մտնում Ինստիտուտի Գիտական խորհրդի կողմից հաստատվելուն օրվան հաջորդող օրվանից:

21. Սույն կանոնակարգում փոփոխությունները և լրացումները կատարվում են Գիտական խորհրդի որոշմամբ: